

Գրիգոր Վարդապետ անմիջապէս չգնաց Երուսաղէմ: Կոլոտ պատրաստեց իր «Հայրքը այն տեղոյն եւ պաշտօնին համար, որուն ամէն կողմն ուսումնասիրած էր անձամբ: Պոլսոյ մէջ հանգանակութիւն, կարգադրութիւն, ամէն բան բրին: Եւ առաջին առիթով Գրիգոր Վրդ. ի Աթոռակալ (= փոխանորդ) կարգեցին կոնդակով՝ Երուսաղէմացի Յովհաննէս (= Հաննէ) Վարդապետը. աշխատասէր, գործունեայ վարդապետ մը, որ Կոլոտին աջակցած էր արգէն, աջ բազուկը եղաւ Երուսաղէմի պատրիարքին մինչեւ իր վերջին շունչը:

Գրիգոր Վարդապետ գործնականապէս զգացընելու համար իր լուծին ծանրութիւնը՝ երկաթ շղթայ մը կախեց իր վիզէն (1718), միշտ վրան պահելով. այլազգիներն անգամ հիացուց այս անձնանուէր եւ սրբակրօն եկեղեցականը՝ շղթայուած իւր պարտքին գիտակցութեամբը:՝ Երկու սրտեր, երկու մտքեր նոյն զգացումով, նոյն խորհրդով՝ երկու Աթոռներու բարեկարգութիւնը ապահովեցին: Ազգը իր առատ եւ յօժար նուէրներով արդիւնաւորեց երկու պատրիարքներուն ջանքերը. շատ շտեւեց, այնպիսի ժամանակ մը, ուր շատ

1 Գրիգոր Ղընյո չհանեց իր վիզէն. եկեղեցիներու դուռը կը նստէր այնպէս եւ Երուսաղէմի համար «ղբում» կը հաւաքէր. այս պատճառաւ Ղընյոյն կոչուեցաւ եւ մնաց այս տիտղոսն իր վրայ նոյն իսկ պատմութեան մէջ: Հայերը Ղընյոյն վարդապետ կ'ըսէին իրեն. իսկ այլազգիները՝ Ջինֆրէկ Վրդապետ: Շարունակ «Բլէ» տարի կրեց այն շղթան թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ Երուսաղէմի. մէջ: Ետքը՝ Ունեցի Կարապետ Կաթողիկոսին հրամանով միայն հանեց, մէկդի դրաւ (1726) հայրապետական կամքը յարգած ըլլալու համար եւ յիշատակարան մ'ալ կանգնեց այս դէպքը յաւերժացընելու նպատակով. «Եւ զի շնորհակալ լիցի զՍրբազան Կաթողիկոսէն եւ Պատրիարքէն եւ ամենայն ժողովրդենէն, յաղագս այնր շինեաց ի Սուրբ Էջմիածին զսեղան իմն ի վերայ երից քարանց անուանակոչութեամբ Սրբոյն Սինսյի ի յիշտակ ազգիս հայոց:» (Հռնէ Էջ 136:)